Արտատպված է՝ Վրթանես Փափազյան, Երկերի ժողովածու, հատոր առաջին, Ե., 1972։

ԵՂՆԻԿ

Խիտ է անտառը. բարձր և տերևախիտ են նորա ծառերը և գեղաճիծաղ նորա առապարները, երբ գարունը նորա մեջն է։

Իսկ երբ փչում է սառն քամին, երբ թափվում են դեղնած տերևները, երբ ձյունը խիտ առ խիտ դիզվում է ծառերի ճյուղերի վրա, երբ ճյուղերը ծանրաբեռնված խոնարհվում են մինչև գետին, և ցնցելով իրենց կատարները ձյան փոշիով լեցնում են օդը, տխուր է նա, սոսկալի է, մութ և խորհրդավոր…

Եվ ոչ մի շնչավոր համարձակվում է անցնել այն տեղից, առանց աչք առնելու մոլորիլ և մնալ ձյունալից մացառների մեջ…

***

Անտառի մոտ մի քարայր կար, քարայրի մեջ մի եղնիկ, և այդ եղնիկը ուներ մի սիրուն փոքրիկ ձագիկ։

Մի առավոտ փոքր եղնիկը շատ զարմացավ, երբ տեսավ, որ իրենց բնակարանի մոտ և ամբողջ անտառը, որո թուփերը յուր զվարճության վայրերն էին, ծածկվել էին մի սառն, սպիտակ սավանով։

Ձյուն էր, որ գիշերն ի բուն տեղալով՝ ծածկել էր մանր թփերն իսկ, որոց շուրջը մայր եղնիկը սիրում էր մամուռներ փնտրել յուր ձագուկի համար։

Այլևս չկար մամուռ. մայր եղնիկը, հափշտակված յուր նոր ձագուկով, մոռացել էր պաշար ժողովել։

«Գնանք անտառը,— մտածեց նա,— գուցե գտնենք ուտելու մի բան»։ Շատ հոտոտաց ծառերի շուրջը պտտելով, պեղեց ոտքերով, և վերջապես գտավ քանի մը դալար խոտեր, որոնցից բաժին հանեց յուր ձագուկի մանրիկ ատամներուն։

Բայց փոքրիկ եղնիկը հանգիստ չէր մնում, ուզում էր խաղալ այդ նորատեսակ գետնի վրա. վազվզում էր, կանգնած զարմանում էր, երբ յուր փոքրիկ ոտները խրվում էին ձյան մեջ. մտնում էր թփերի տակ, որոնց դիպչելով զվարճանում էր, երբ նոցա վրայից ձյունը թափվում՝ թաթախում էր յուր դունչը, ականջները և մարմինը…

Ցատկում էր մացառների, փոքրիկ առվակների վրայից. այս կողմից կրծում էր մի խոտի կամ շյուղի ծայր, մյուս կողմից լեզուն թաթախում էր առվակի մեջ, և այսպես անդադար այս և այն կողմ ցատկրտելով հեռանում էր ու հեռանում…։

Մոռացել էր, որ մայրը յուր հետը չէր։

***

Վարդի թփիկ մի գտավ, նորա արմատի մոտ բուսած խոտերը սկսեց կրծել, պահ մի դունչով սառ ձյունը լզեց, պահ մ՝ալ գլխի վրայից թռչտող թռչուններին նայեց…

Հանկարծ մի «Բում. ..» ձայն լսեց. սաստիկ վախեցած վեր թռավ տեղից, մի քանի քայլ ցատկելով փախավ. հետո կանգ առավ, ականջները սրեց և սպասեց:

Կարծում էր լսել յուր մոր ձայնը, որ կողկողագին «մէ՛է՛է՛» էր գոչում: Երկու ոստյուն գործեց, թռավ թփիկի վրայից, և առանց ուշ դարձնելու խիստ քամուն, հանդիպող փշալից մացառներուն և ձյան փոշուն, սկսեց դեպի ձայնը լսված կողմը վազել:

***

Ձայնը հետզհետե մոտենում էր ծառի մը շուրջը դարձավ հևալով, վազեց բաց միջավայր մը, և հեռուեն ձյան վրա բան մը նկատեց, որո վրա ժողվվել էին և որո շուրջը թռչտում էին շատ մը սոսկալի սևափետուր ագռավներ:

Շնչասպառ մոտ վազեց և ճանաչեց յուր մորը, որ ընկած՝ կրծքեն դուրս բղխող արյունով ներկում էր ձյունը, որ երբ տեսավ ձագուկին, թույլ ձայնով «մէ՛է՛է՛» մը գոչեց և փակեց աչքերը…

***

Փոքրիկ եղնիկը հոտոտեց մորը. նախ չիմացավ, թե ինչ էր եղել. մայեց, ոտներով ու դունչով շարժեց մորը, լզեց…

Պաղ էր մայրը. նորա սառած աչքերն բաց, բայց անշարժ էին: Մայեց աղիողորմ ձայնով. չորս կողմը նայեց, վեր նայեց, կարծես զգում էր, որ մի բան է եղել և օգնության էր սպասում…

Ագռավները շրջան էին կազմել մոր շուրջը և զանազան ոստումներով փորձում էին մոտ գնալ…

Ուզեց կաթ ծծել. տեսավ, որ այլևս կաթ չկար մոր ծծերի մեջ... անոթի էր. փչում էր սառն քամին, մրսում էր:

Հետզհետե մայունը սաստկացավ. «մէ՛ է՛ է՛» գոչում էր լալագին և դողդոջուն ձայնով. «մէ՛ է՛ է՛...» արձագանք էր տալիս անտառը. ագռավները կաչկաչում էին, հողմը սուլում, ձյան հատիկները ճյուղերից նոցա վրա թափվում. և այդ բոլորի միջից խեղճ որբ եղնիկի աղիողորմ «մէ՛ է՛ է՛ »-ն թնդացնում էր անտառը:

Հետզհետե խավարը տիրեց ամեն կողմ, ագռավները թռան գնացին, հովը սաստկացավ և ձյուն սկսեց գալ…

Երբեմն-երբեմն լսվում էր ձագուկի թույլ ձայնը «մէ՛ է՛ է՛...»:

***

Մյուս օրը ծերունի որսորդ Հակովբը հրացանը ուսին՝ անտառը մտավ աղվես որսալու. և երբ մթնալուն համար կամենում էր ետ դառնալ յուր որսացած քանի մը աղվեսներով, ծառի մը տակեն անցած ժամանակ թույլ ձայն մը լսեց, որ եղնիկի ձայնի էր նմանում:

Հետաքրքրեցավ, ձայնին կողմը գնաց. հեռուեն սև իր մը նկատեց: Մոտեցավ և նայեց:

Փոքրիկ եղնիկն էր, դունչը մոր գլխի վրա՝ մեռել էր. իսկ քանի մի կաթիլ արտասուք ցրտից սառած՝ կեցել էին նորա ակնաղբյուրների վրա…

Աստված չէր ուզել, որ մոր մեռնելուց հետո խեղճուկ եղնիկը ապրեր:

Խեղճ որբը մեռել էր շատ լալուց հետո:

Մի քանի ծանր ճյուղեր խորտակված, իրենց վրայի ձյունը սփռել էին նոցա վրա որպես հող, և իրենք ևս ընկել էին այդ կույտի վրա որպես պսակ…